2019, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (525)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

2019 ԹՎԱԿԱՆԸ ՀՌՉԱԿՎԵՑ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս,

Ամանորի բերկրալի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ: Ձերմ զգացումներով Մեր բարեմաղթանքներն ենք հղում այս պահին ծառայության վայրում իրենց պարտականություններն իրականացնողներին, հայրենյաց սահմաններն անառիկ պահող մեր բանակի սպաներին ու զինվորներին, եկեղեցիներում աղոթքի համախմբվածներին, տոնական սեղանների շուրջ հավաքված Մեր բոլոր զավակներին:

Նոր տարվա սեմին գոհություն ենք հայտնում Աստծուն, որ անցնող՝ 2018 թվականին խաղաղ պահեց մեր հայրենիքը եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին օրհնեց բարիքով, արդար վաստակով եւ ձեռքբերումներով՝ ազգային ու եկեղեցական կյանքում: Գոհություն ենք առ Աստված բարձրացնում նաեւ, որ մեր ժողովրդի ազգասեր ոգու եւ ողջամտության շնորհիվ խաղաղ ընթացք ունեցան քաղաքական զարգացումները երկրում, եւ մենք այսօր 2019 թվականը դիմավորում ենք դրական տեղաշարժերի սպասումներով: Ամեն Նոր տարի նոր սկիզբ է, որը լի է նորի ակնկալությամբ, ավելի լավի ու կատարյալի ձգտումով: Նոր տարվա հետ կապում ենք այն ամենը, ինչը կուզենայինք բարեփոխել, կարգավորել եւ շուտով տեսնել մեր նպատակների իրականացումը: Բարեփոխումների պահանջը եւ քաղաքացիական նախաձեռնությունը, որ առկա են այսօր մեր կյանքում, անկասկած, բարի արդյունքներ պիտի բերեն, առավել խնամք, առավել ջանք ու ձգտում՝ ամրապնդելու հիմերն իրավական պետության, արդար, օրինահարգ հասարակության, շենացնելու մեր երկիրը եւ համայն ազգային կյանքը: Սա է մեր ուղին, որը հաստատուն պիտի պահենք՝ միշտ հիշելով, որ Հայաստանի զարգացումը եւ հզորությունը ազգային մեր իղձերի իրագործման առանցքն են եւ պայմանը Արցախի ապահովության եւ Սփյուռքի կենսունակության:

Սիրելինե՛ր, այս պահին, երբ բարի սպասումների հետ մեր մտահայացքն ուղղված է գալիքին, մեր ծրագրերին ու անելիքներին, հայրական հորդորով փոխանցում ենք ձեզ մեր Տիրոջ կենարար պատգամը. «Այս եմ պատվիրում ձեզ, որ սիրեք միմյանց» (Հովհ. ԺԵ 17): Մեր կյանքը իմաստավորվում է տերունապատվեր սիրո առկայությամբ: Որտեղ սերն է, այնտեղ հավատն է զորանում, այնտեղ հույսն է առատանում, համերաշխությունը արդարությամբ ու բարի գործերով պտղաբերում: «Սերը երբեք չի անհետանում» (Ա Կորնթ. ԺԳ 8),- ասում է առաքյալը: Այո՛, այն թթխմորի նման աճում է, դառնում կորով, անդուլ ջանք, հանձնառություն, որոնցով պիտի ապահովվի մեր կյանքի վերընթացը:

Այս մտորումներով եւ հոգու ուրախությամբ պատգամում ենք մեր բարեպաշտ ժողովրդին՝ սիրով ու լավատեսությամբ, միմյանց աջակից շարունակել ապրել ու գործել եւ նվիրյալ ջանքեր ներդնել՝ ի զորացում հայրենի մեր երկրի եւ հոգեւոր ու ազգային մեր կյանքի:

Մաղթում ենք խաղաղություն աշխարհին, խաղաղություն՝ մեր հայրենիքին, անսասանություն՝ մեր պետականությանը, շնորհառատ օրհնություն՝ աշխարհասփյուռ ազգիս հայոց եւ բոլոր ժողովուրդներին: Թող 2019 թվականն ուրախություն բերի մեր ընտանիքներին եւ առաջընթաց ու ձեռքբերումներ՝ մեր կյանքին:

Շնորհավոր Նոր տարի:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

ՓԱՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՔՈ, ՏԷՐ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր ունկնդիր ենք Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսին եւ խնդությամբ օրհնաբանում ենք Աստծուն՝ փրկության Իր շնորհի համար: Նրան ենք փառաբանում, ասում է առաքյալը, «Ով կարող է մեզ պահել անբիծ ու անարատ եւ կանգնեցնել Իր փառքի առաջ անխառն ցնծութեամբ» (Յուդա 24):

Մսուրում ծնված եւ աշխարհ եկած Մանկան մասին հրեշտակն ավետում է. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ Օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ 11): Քրիստոս ծնվեց Աստծո երկյուղով լեցուն, երկնային առաքինություններով զարդարված Սուրբ Կույսից: Աստծո Որդին հասակ առավ բարեպաշտ ընտանեկան հարկում Սուրբ Տիրամոր եւ Սուրբ Հովսեփի, որոնք ամեն նեղության ու հալածանքի համբերեցին, հոգ տարան Մանուկ Հիսուսին՝ իրենց հավատավոր կյանքով դառնալով Նրա աստվածային առաքելության մասնակիցը:

Սուրբ Ծննդյան հրաշազարդ պատկերի մեջ, սիրելինե՛ր, տեսնում ենք, որ փրկության ուղին սկիզբ առավ ընտանիքից: Ընտանիքից ծագեց մարդկանց երկնային արքայության ժառանգորդը դարձնելու լուսեղեն ճանապարհը: Քրիստոսով, արդարեւ, մենք որդեգիրներն ենք Աստծո: Քրիստոսով մեզ Հայր է Արարիչն Աստված, Որը սիրում է մեզ եւ նորոգում է մեր կյանքը Սուրբ Ծննդյան հուսառատ ու օրհնաբեր ուրախությամբ: Փրկչի Ծննդյան ավետիսը ոռոգում է մեր հոգիները, լիացնում մեր հոգեւոր ապրումներն ու զգացումները, պարգեւում է ուժ ու զորություն՝ աստվածային կամքի մեջ մնալու, մեր կյանքում ու գործերում զորացնելու խաղաղության, արդարության, սիրո, համերաշխության ուղիները եւ մշտահունչ պահելու առ Աստված փառաբանությունը. «Փառք հրաշափառ Ծննդեան եւ Յայտնութեան Քո, Տէ՛ր»:

Սուրբ Ծննդյան հոգեպարար զգացումների մեջ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, մեր աղոթական մտքերն ուղղված են նաեւ աշխարհի մեծ ընտանիքի հավատակից մեր այն քույրերն ու եղբայրները, որոնք նվիրական այս տոնը դիմավորում են վշտի ու նեղությունների մեջ: Մեր մտածումներն ուղղված են այնտեղ, որտեղ մարդկության կյանքը տեւականորեն ալեկոծում են անարդարությունը, գերիշխելու անհագուրդ տենչը, ագահությունը, որտեղ մարդիկ շարունակում են կրել աղքատության, իրավունքների ոտնահարման, պատերազմների առաջ բերած ավերներն ու ցավերը, որտեղ բռնությունը բռնություն է ծնում, ատելությունը՝ ատելություն, խաբեությունն ու սուտը բազմապատկվում են նոր կեղծիքներով: Այս չարիքները, լինեն դրանք միջանձնային հարաբերություններում, ընտանիքներում թե ազգերի ու պետությունների միջեւ, տանում են դեպի փակուղիներ ու ճգնաժամեր, որոնց հաղթահարման համար շարունակ մեծ ջանք ու ճիգեր են պահանջվում: Փակուղիների են տանում նաեւ կեղծ ազատականության աստվածամարտ ընթացքները՝ հեռացնելով տերունապատվեր կյանքից, հոգեւորից, խաթարելով հիմերը առողջ հասարակության եւ ամուր ընտանիքի: Քրիստոսի պարգեւած փրկության աստվածապատվեր ուղիներով է, որ մարդկությունը պիտի կարողանա Երկիր մոլորակի վրա լինել ու մնալ որպես մեծ ընտանիք՝ փոխադարձ սիրով ու օգնությամբ ամոքելով իր վերքերը, հոգալով կարիքները,

կարգավորելով այս աշխարհի խնդիրները եւ ծառայելով «ցերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» հրեշտակաձայն պատգամին, որը հնչեց շնորհաբեր ժամին Քրիստոսի Սուրբ Ծննդյան:

Մեր պատմության օրհնյալ ժամանակաշրջանում մեր ժողովուրդը Քրիստոսով դարձել է հավատավոր մեկ ընտանիք՝ լուսավորվելով Տիրոջ կենարար շնորհներով: Առ Տերը հավատարիմ ընթացքը բարեպաշտ մեր նախնյաց, մենք, որպես նրանց հարազատ զավակները, պիտի շարունակենք պահպանել անսասան հավատով եւ ապրել ու գործել առաջընթացի վճռականությամբ:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Այսօր մեր կյանքի նոր փոփոխություններում թեւածում են հույսն ու լավատեսությունը՝ նորանոր ձեռքբերումներ արձանագրելու, հաջողություններ ու հաղթանակներ կերտելու: Միմյանց ապավինելով ու սատարելով ի զորու ենք շենացնել մեր կյանքը հայրենիքում ու սփյուռքում, պաշտպանել մեր սահմանները, ազգային արդար իրավունքները, հզորացնել Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը: Հայրենիքի արժանավոր զավակ դաստիարակելու, պետության քաղաքացի կրթելու առաջին հանգրվանը ընտանիքն է: Ընտանիքում է կերտվում ազգի ապագան, դրվում հիմերը հզոր պետության: Ընտանիքի գորովաշատ միջավայրում են մանուկ հոգիներում պտղաբերում Աստծո խոսքի սերմանված հունդերը, սնուցվում հոգեւոր-բարոյական արժեքները, բարին ընտրելու աներկյուղ ոգին: Ընտանիքում մատուցված օրինակով կրթվում են միմյանց հանդեպ սերը, վստահությունը եւ հոգատարությունը: Արդ, նախանձախնդիր մնանք նվիրականության ու ամրությանը ընտանիքի: Անխաթար պահպանենք աստվածահաստատ ընտանիք հասկացությունը, նրա սրբությունը, ազգային ավանդույթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգեւոր ու ազգային կյանքը եւ մնանք մշտապես Տիրոջ որդեգրության շնորհի մեջ՝ որպես հավատավոր մեկ ընտանիք, որպես Աստծո սեփական ժողովուրդ:

Աստվածօրհնյալ ընտանիքի արժեքը եւ հիմնարար առաքելությունը կարեւորելով ազգային, պետական ու հասարակական մեր կյանքում՝ 2019 թվականը հռչակում ենք Ընտանիքի տարի: Հորդորում ենք եկեղեցական եւ թեմական մեր կառույցներին եւ հոգեւոր սպասավորներին նախաձեռնել ընտանիքներին ուղղված աջակցության ծրագրեր ու միջոցառումներ, կազմակերպել ուխտագնացություններ մայր հայրենիք, Սուրբ Էջմիածին, Տերունական եւ հայրենական սրբավայրեր՝ զորանալու հավատքով, տոգորվելու հայրենյաց սիրո ջերմությամբ եւ ազգի ու հայրենիքի զավակը լինելու նվիրական գիտակցությամբ:

Սուրբ Ծննդյան բերկրալի ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին: Աղոթում ենք հիվանդության մահճում գտնվող Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյան Պատրիարքի համար: Փրկչի շնորհների հայցով Մեր ողջույնն ենք հղում քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին: Հայրապետական օրհնությամբ ողջունում եւ Մեր բարեմաղթանքներն ենք բերում Սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Վարչապետի պաշտոնակատար տիար Նիկոլ Փաշինյանին եւ նրա ազնիվ տիկնոջը: Ողջույն ենք հղում Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Արմեն Սարգսյանին, Արցախի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սերը, օրհնությունն ու բարեմաղթանքները՝ մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան հոգեւորոգ այս օրը աղոթում եւ հայցում ենք, որ աշխարհում բազմապատկվեն երկնային շնորհները, մարդիկ առատությամբ պտղաբերեն բարի գործեր, սեր, արդարություն, խաղաղություն, զուտ ու ողորմածություն, որոնք դիմաղարձում են չարիքներին եւ ճանապարհ հարթում դեպի լուսավոր գալիքը մարդկության: Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Իր ամենախնամ հոգածության եւ սիրո մեջ պահի մեր ժողովրդին եւ պարգեւի ուժ ու զորություն՝ կերտելու նոր օրը իր կյանքի եւ մնալու օրհնյալ, նվիրյալ ընտանիքը Քրիստոսի՝ հավատարիմ սրտով միշտ փառաբանելու. «Փառք հրաշափառ Ծնողեան եւ Յայտնութեան Քո, Տէ՛ր»:

Գոհաբանական այս զգացումով աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդին ցնծությամբ ավետում ենք՝

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Սուրբ Ծննդյան ճրագալույցի Պատարագը Սուրբ Գայանե վանքում

Հունվարի 5-ին մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության բերկրառատ տոնի նախատոնակի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում մատուցվեց ճրագալույցի ս. Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, ուխտավոր հայորդիներ եւ տոնի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած Մայր Աթոռի բարերարներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Ոսկան արք. Գալփաքյանը:

Մինչ Պատարագը կատարվեց Երեկոյան ժամերգություն, ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, այնուհետեւ Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Պատարագի ընթացքում Ոսկան սրբազանն իր քարոզում անդրադարձ կատարեց Քրիստոսի Սուրբ Ծննդյան խորհրդին՝ ի մասնավորի նշելով. «Աստված անիծեց նախամարդուն՝ Ադամին, եւ վտարեց Եդեմական դրախտից: ...Աստված մարդացավ, որպեսզի մարդը կարողանա Աստծո մոտ հասնել: Այն, ինչ ժառանգեցինք Ադամից, մահ է եւ մարդու պարտությունն է, մարդու ենթակայությունը սատանային: Ահավասիկ, Քրիստոս եկավ աշխարհ՝ Բեթղեհեմի սուրբ այրի մեջ, որպեսզի ազատի անիծված նախամարդուն եւ աշխարհը: ...Աստված մարմին առավ, այսինքն՝ Քրիստոս ծնվեց որպես մարդ եւ դարձավ մեզ նման: Դա պատճառ եղավ, որ մենք կարողանանք ազատվել ադամական մեղքից: ...Մարդկությունը միշտ օրհնում է այն երեւույթը, որ Աստված մարդացավ, եկավ աշխարհ»:

Սրբազան հայրն ընդգծեց, որ Աստված ոչ միայն Իր Որդուն առաքեց, որպեսզի մարդկությունը փրկվի, այլ, ինչպես ասում է շարականագիրը, առանց աչք թարթելու հովվի Իր Եկեղեցուն ու ժողովրդին:

«Եթե Աստված անքուն աչքով միշտ պահում է Նոր Իսրայելը՝ Քրիստոսի ժողովրդին, Քրիստոսի թագավորության հպատակներին, ապա ի՞նչ պարտավորություն ունենք մենք՝ որպես այդ թագավորության ժառանգներ կամ քաղաքացիներ: Աստված կատարում է Իր պարտավորությունները. ուղարկեց Իր Որդուն, մարդ դարձավ, փրկեց մարդկությանը եւ առանց նիրհելու հետեւում է մեզ, պահում է մեզ՝ Նոր Իսրայելին, քրիստոնյա ժողովրդին:

Իսկ դրա դիմաց ի՞նչ պարտավորություն ունենք մենք: Մենք ունենք պարտավորություն լսելու, ենթարկվելու Աստծո հրամաններին: Եվ այդ հրամանները ծանր չեն: Քրիստոսի եւ Աստվածաշնչի հրամանները քաղցր են եւ թեթեւ: Եթե մենք պիտի հետեւենք, եթե մենք սիրում ենք Աստծուն, ապա Նրա բոլոր հրամանները հաճույքով պիտի կատարենք, պիտի ձգտենք դրանք կատարել, պիտի ուզենք դրանք կատարել»,- ասաց պատարագիչ սրբազանը՝ հաստատելով, որ յուրաքանչյուր քրիստոնյա ամեն բանից առաջ պետք է երկրպագի նորածին Քրիստոսին, ինչպես հովիվներն ու մոգերը, որոնք, թողնելով ամեն ինչ, գտան Քրիստոսի ծննդյան վայրը եւ իրենց հարգանքն ու երկրպագությունը մատուցեցին Նրան: Ոսկան սրբազանը նշեց նաեւ, որ Քրիստոսի ծննդյամբ ողջ մարդկության համար երկնքից խաղաղություն բերվեց:

Վերջում սրբազանը հորդորեց հավատացյալներին անձանձրույթ կերպով աղոթել եւ անդադար փառաբանել Աստծուն, ապաշխարել եւ մեղք չգործել, որպեսզի կարողանան ժառանգել հավիտենական կյանքն ու երկնքի արքայությունը:

Հավարտ Պատարագի՝ Ամենայն Հայոց Հայրապետը բարձրացավ ս. Խորան եւ վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Հին Վեհարանում, ուր, նախագահությամբ Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի, կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց Տիրոջ Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության ավետիսը:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ Ջրօրհնեքի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից, ջրօրհնյաց շարականների երգեցողությունից եւ աղոթասացությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը: Օրհնությունից հետո սուրբ խաչը փոխանցվեց խաչի այս տարվա կնքահորը՝ ՀԲԸՄ-ի Կենտրոնական խորհրդի անդամ, ՀԲԸՄ-Հայաստանի նախագահ Վազգեն Յակուբյանին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան բարեմաղթանքները փոխանցեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված ջուրը բաշխվեց հավատացյալներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Տավուշի թեմից ժամանած պատանի ուխտավորներին

Դեկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ընդունեց Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած Տավուշի թեմի կիրակնօրյա դպրոցների ավարտական դասարանների, սոցիալ-կրթական կենտրոնների սաներին, ինչպես նաեւ Իջեւանի եւ Բերդի եկեղեցիների մանկապատանեկան երգչախմբերի անդամներին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանի եւ թեմի հոգեւորականների:

Բագրատ սրբազանը Նորին Սրբությանն իր խորին շնորհակալությունը հայտնեց այն ուշադրության եւ հայրական խնամքի համար, որ վերջինս տածում է Տավուշի թեմի նկատմամբ: Տեղեկացնելով Ամենայն Հայոց Հայրապետին թեմում գործող կիրակնօրյա 40 դպրոցի եւ սոցիալ-կրթական 2 կենտրոնի մասին, ուր հաճախում է շուրջ 2000 երեխա՝ առաջնորդ սրբազանն ընդգծեց, որ տոների սեմին 353 տավուշեցի է եկել Մայր Աթոռ՝ սնվելու հայոց հավատքի ու ազգային ինքնության ջինջ ակունքից եւ ստանալու Վեհափառ Հոր օրհնությունները:

Այնուհետեւ Նորին Սրբությանն ուրախություն պարգեւեցին Իջեւանի եւ Բերդի եկեղեցիների մանկապատանեկան երգչախմբերը՝ կատարելով հատվածներ Ս. Պատարագից եւ Սուրբ Ծննդյան շարականներ: Հայրենասիրական երգերի կատարումներով հանդես եկան առանձին պատանիներ:

Այցի առիթով Բագրատ սրբազանը ներկաների անունից Նորին Սրբությանն ընծայեց մի ձեռագործ՝

Տերունական աղոթքով, եւ Տավուշ աշխարհի բերքն ու բարիքը խորհրդանշող անուշեղեն:

Ապա երիտասարդներին իր պատգամն ու օրհնությունը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով Ս. Էջմիածին տավուշեցիների ուխտագնացության առիթով, որը շնորհառատ օրհնություններ պիտի պարգեւի նրանց եւ ընդունելի դարձնի վերջիններիս աղոթքներն ու հայցն առ Աստված՝ առատացնել նրանց կյանքում սերն ու խաղաղությունը:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ քրիստոնեության ընդունումից հետո հայ ժողովրդի զավակները մշտապես պահել են իրենց հավատարմությունը Տիրոջ հանդեպ՝ իրենց կյանքում կենսագործելով տերունավանդ պատվիրանները, կերտելով վանքեր, եկեղեցիներ եւ խաչքարեր:

«Աղոթեցինք մեր վանքերում, մեր խաչքարերի առջեւ: Այդ աղոթքով զորացանք, այդ աղոթքով կերտեցինք մեր հաղթանակները, դիմակայեցինք մեր կյանքի բոլոր փորձություններին եւ քայլեցինք դարերի մեջ, քայլեցինք միշտ հաղթական՝ ապավինած մեր հայրերի Աստծուն՝ վստահությամբ, որ պիտի կերտենք մեր երազների երկիրը, կերտենք մեր կյանքի լուսավոր օրը եւ ապրենք շեն ու խաղաղ մեր հայրենիքում»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հույս հայտնելով, որ տավուշեցիները, զորացած Սուրբ Էջմիածին այցով, ուրախ ու գոհունակ սրտով, հոգում զգալով Աստծո զորավոր ներկայությունը, պիտի վերադառնան Տավուշ ու շարունակեն հայրենիքի սահմաններն անառիկ պահելու իրենց առաքելությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց պատանիներին լավ սովորել ու գիտելիքներ ամբարել՝ դրանք կիրառելու ի պայծառություն եւ ի բարօրություն հայրենիքի: Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց, որ նրանք կրթվում ու դաստիարակվում են հայրենիքի եւ Աստծո հանդեպ սիրո մեջ՝ համախմբվելով Հայ Եկեղեցու կամարների ներքո: «Աստծո հետ լինել նշանակում է հզոր լինել, Աստծո հետ լինել նշանակում է երջանիկ կյանքով ապրել, Աստծո հետ լինել նշանակում է Աստծո օրհնության ներքո լինել»,- պատգամեց Հայոց Հայրապետը:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Տավուշի թեմի բարեջան առաջնորդ Բագրատ եպիսկոպոսին՝ նվիրյալ ու անձնդիր ծառայության համար, որի շնորհիվ կերպարանափոխվել է Տավուշ աշխարհը: Վեհափառ Հայրապետը նաեւ հայցեց Երկնավորից, որ թեմի հոգեւոր սպասավորների բարի ջանքերը բազմապատիկ արդյունք տան՝ ի նպաստ Տավուշի ժողովրդի հոգեւոր կյանքի զորացման, որպեսզի կարողանան քայլել Աստծո ճանապարհներով:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը մաղթեց, որ Աստված օրհնի Տավուշն իր ժողովրդով եւ քաջարի զավակներով՝ պահելով խաղաղ ու անվրդով, զարգացման ու առաջընթացի մեջ:

Լուրեր Կալկաթայից. Պատարագ Ս. Նազարեթ եկեղեցում

Դեկտեմբերի 16-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայոց եկեղեցում, ձեռամբ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ Հայկազուն եպս Նաջարյանի, մատուցվեց Պատարագ:

Սրբազան հայրն իր քարոզում նշեց, որ փառավոր ապրում է միասնաբար աղոթելը հնդկահայ համայնքի եւ Հայոց մարդասիրական ճեմարանի սաների հետ՝ Ս. Նազարեթ պատմական եկեղեցում: Որպես իր քարոզի առանցքային ուղերձ՝ սրբազան հայրը կարեւորեց «հավատք» եւ «աշխատասիրություն» հասկացությունները եւ այն, թե ինչպես են դրանք օգնում մեզ հաղթահարելու դժվարությունները եւ հասնելու մեր երազանքներին: Նա, խոսքն ուղղելով ճեմարանի սաներին, ասաց, որ հավատն ու լավ ուսումնառություն են, որ պիտի օգնեն նրանց օգտագործելու այս ոսկե հնարավորությունը եւ հասնելու իրենց պայծառ ապագային՝ ի շահ Հայաստանի ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու: Նա որպես օրինակ բերեց սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետին, որ հավատով ու մեծ դժվարությամբ փորձեց բարձրանալ Արարատ լեռը, եւ Աստված, տեսնելով նրա հավատն ու վճռականությունը, օգնեց նրան՝ տալով նոյյան տապանի մասունքը:

Սրբազան հայրը նաեւ շնորհակալություն հայտնեց հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական

ճեմարանի կառավարիչ Մովսես վրդ. Սարգսյանին՝ այս գեղեցիկ առիթն ընձեռելու համար:

Պատարագին ներկա էին Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության անդամները, հնդկահայեր, Հայոց մարդասիրական ճեմարանի ուսուցիչներն ու աշակերտները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻ ԱՌԻԹՈՎ

Մեծարգո՛ Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Հարգելի նախագահող,
Պատվարժան պատգամավորներ եւ սիրելի ներկաներ,

Ողջունում եւ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ Ազգային ժողովի 7-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով: Արգասաբեր գործունեության մաղթանքով շնորհավորում ենք Ազգային ժողովի նորընտիր պատգամավորներիդ:

Այսօր դուք՝ իբրեւ վստահյալ ներկայացուցիչները ժողովրդի, ստանձնում եք ձեր պարտականությունները: Հայաստանի նոր կյանքը կերտելու պատասխանատվությունը նաեւ ձեր ուսերին է, քանզի մեր երկրի առաջընթացն ու զարգացումը մեծապես պայմանավորված են օրենսդիր մարմնի գործունեությամբ:

Մեր ժողովուրդը բարեփոխումների մեծ սպասումներ ու ակնկալություններ ունի: Բարօրության ու կարիքների հոգածության հրամայականը չէ միայն, որ հուզում է մեր ժողովրդին: Մեր երկրի առջեւ ծառացած են արտաքին հանգամանքներով պայմանավորված լրջագույն մարտահրավերներ, որոնց դիմակայելու եւ շահեկան կերպով լուծումների առաջնորդելու համար ներքին կյանքում պիտի ունենանք հնարավորինս քիչ խնդիրներ: Պետական, քաղաքական գործիչների եւ ողջ հասարակության ընդհանուր բարեխղճությունը եւ քաղաքացիական պատասխանատվությունը գլխավոր պայմանն են մեր ժողովրդի ներուժի համախմբման, մեր պետականության ամրապնդման եւ մեր շեն, հուսալի ապագայի կերտման:

Հարգարժա՛ն պատգամավորներ, ձեր օրենսդրական ջանքերով պիտի ձեւավորվեն անհրաժեշտ միջավայր ու հնարավորություններ՝ մեր երկրի տնտեսության շարունակական զարգացման, գիտության, կրթության, մշակույթի առաջընթացի համար, մեր ժողովրդի անվտանգության եւ խաղաղության ապահովման համար: Ձեր հաստատած օրենքները պիտի ծառայեն հասարակական մեր կյանքում ամրապնդելու օրինականությունը, արդարությունն ու իրավունքը, որոնք կզորացնեն մեր ընթացքը՝ ապրելու եւ գործելու փոխադարձ հարգանքի, սիրո եւ համերաշխության մեջ: Սիրո եւ համերաշխության ոգով, հավատում ենք, պիտի արդյունավորվեն նաեւ այս դահլիճում ընթացող քննարկումները եւ կայացվող որոշումները: Քաղաքական հայացքների եւ տեսակետների բազմակարծությամբ հանդերձ՝ մեր հայրենիքի եւ ժողովրդի լուսավոր ապագայի նույն տեսլականն է միավորում ձեզ՝ համախումբ ջանքերով ներդրում բերելու ազգային մեր իղձերի իրագործման նվիրական առաքելությանը: Պատվերն ունենք առաքյալի՝ ճշմարտությամբ, արդարությամբ, սրբությամբ, առաքինությամբ ու սիրով խորհելու (Փիլ. Դ 8), միաշունչ եւ միախորհուրդ լինելու եւ հակառակության ոգով չգործելու (Փիլ. Բ 2-3): Ճշմարիտ է ասված՝ միաբանությամբ փոքրերը մեծանում են, եւ անմիաբանությամբ մեծերը՝ փոքրանում: Արդ, ամուր պահենք Հայաստան, Արցախ, Սփյուռք միասնականությունը, հավատարմությունը մեր հոգեւոր եւ ազգային արժեքներին, մեր հայրերի նվիրական պատգամներին, որպեսզի ունենանք շնորհն ու զորությունը կերտելու մեր հայրենիքի եւ ազգային կյանքի զարթոնքը:

Սուրբ Ծննդյան հոգենորոգ այս օրերին, արդարեւ, զորանում են հավատն ու վստահությունը, որ քրիստոնեական իր արժեհամակարգով մեր ժողովուրդը պիտի շարունակի լինել արարող ու զարգացող ազգ, հոգով ու մտքով լուսավորված ազգ՝ կարող բարեփոխելու իր կյանքը: Մեր եկեղեցին, ինչպես բազմադարյա մեր պատմության ընթացքում, այսօր եւս շարունակելու է իր զորակցությունը բերել հայրենի իշխանությունների ազգաշեն նախաձեռնություններին:

Մեծարգո՛ պատգամավորներ, Աստծո օրհնությունն ու շնորհներն ենք հայցում ձեզ եւ ձեր գործունեությանը: Հայրենիքի հանդեպ ձեր սերը թող ուղղորդի եւ ուժ ու կորով պարգեւի ձեզ: Թող Տերը Իր Սուրբ Աջի եւ խնամքի ներքո պահպանի ու օրհնի մեր ժողովրդին եւ սրբազան մեր երկիրը՝ խաղաղության մեջ եւ բարգավաճման ճանապարհին՝ այսօր եւ միշտ. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի դաշտոնեությանը

Դեկտեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով հանդիպեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ:

Միասնական աղոթքից հետո Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը՝ բերկրաշատ տոների առիթով, եւ վստահեցրեց, որ Մայր Աթոռի պաշտոնեությունը՝ իբրեւ մեկ ընտանիք, համախբված Ամենայն Հայոց Հայրապետի շուրջ, նոր տարում շարունակելու է իր գործուն նպաստն ու ներդրումը բերել Ս. Էջմիածնի առաքելության իրականացման սրբազան գործում:

Պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց նաեւ Մայր Աթոռի երիցագույն աշխատակիցներից տիար Նորայր Խաչատրյանը: Վերջինս ընդգծեց, որ Վեհափառ Հայրապետի 20-ամյա գահակալության տարիներին հետեւողական կերպով իրագործվել են բազմաթիվ ծրագրեր՝ քարոզչական, կրթական, սոցիալական եւ եկեղեցաշինության ոլորտներում: Պրն Խաչատրյանը Նորին Սրբությանը բարեմաղթեց ուժ, եռանդ եւ հաստատակամություն՝ ազգի եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման համար:

Այնուհետեւ Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը, իր ուրախությունը հայտնելով ավանդական դարձած հանդիպման կապակցությամբ, իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակազմին՝ նվիրյալ ծառայության համար, որի շնորհիվ արդյունավորվում է Ս. Էջմիածնի առաքելությունը, պայծառանում Հայ Եկեղեցու հոգեւոր կենտրոնը:

Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց տարվա ընթացքում նախանշվող կարեւոր ծրագրերին: Մասնավորապես անդրադարձավ 2019 թվականն Ընտանիքի տարի հռչակելուն, որի առիթով Մայր Աթոռի կողմից կանցկացվեն հասարակության մեջ ընտանիքի արժեւորմանը, ընտանեկան արժեքների եւ ամրության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Նորին Սրբությունը տեղեկացրեց ընթացիկ տարում Ազգային-եկեղեցական ժողովի գումարման, Մայր տաճարի ու Վեհարանի հիմնանորոգության աշխատանքների եւ եկեղեցական նոր ծրագրերի մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց քաջառողջություն, երջանկություն ու հաջողություններ կյանքում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ.
բանաստեղծական արվեստի նորարարը



Վահան Տերյանի պոեզիան հայ գրականության զարգացման օրինաչափ ընթացքի արդյունքն է՝ նրա ոսկե շղթայի օղակներից մեկը: Տերյանի բանաստեղծական ծագումնաբանությունը գալիս է դարերի խորքից՝ Նարեկացուց, Սայաթ-Նովայից մինչեւ Թումանյան ու Իսահակյան: Դառնալով հայ բազմադարյան բանաստեղծական մշակույթի բնականոն շարունակություն ստեղծողը՝ Տերյանը միաժամանակ ամենամեծ նորարարը եղավ մեր բանաստեղծական արվեստի պատմության մեջ: Նորարարությունը՝ որպես բանաստեղծական խառնվածքի ու գեղարվեստական մտածողության յուրօրինակ դրսեւորում, ուղեկցեց բանաստեղծին ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում: Վիթխարի են Տերյանի բերած հեղաշրջիչ նորությունները բոլոր ասպարեզներում, բայց գլխավոր նորությունը արեւելահայ չափածոյի լեզվի զարգացման ուղիներում գրական խոսքի յուրօրինակ բանաստեղծականացումն էր, լեզվական նոր որակի հայտնաբերումը:

19-րդ դարից սկսած՝ չափածոն հակվեց դեպի գրաբարյան, գրքային բառապաշարը՝ այն դիտելով որպես խոսքի բանաստեղծականացման միջոց: Նմանօրինակ բառապաշարի գործածության անհրաժեշտությունը հետագայում էլ կզգացվեր, եթե սկզբունքորեն նոր ձեւով չլուծվեր չափածո խոսքին անհրաժեշտ գրական բառապաշարի հարցը: «Հաղթահարման երկու գլխավոր միջոց կար,– գրում է Ռ. Իշխանյանը,– մեկը լեզվի ժողովրդայնացումն էր, ժողովրդաբարբառային տարրերի առատ ներարկումը գրական խոսքի մեջ...», իսկ մյուս ուղին՝ գրական լեզվի արհեստականությունը գրական խոսքի բանաստեղծականացման միջոցով հաղթահարելու ուղղությունը *(Ռ. Իշխանյան, Տերյանի լեզվական արվեստը (դասախոսություն), մաս Ա, Ե., 1972, էջ 4)*:

Հանճարեղ բանաստեղծ Ե. Չարենցը լեզվամշակման նշված երկու ուղղություններն իրավացիորեն անվանեց տերյանական ու թումանյանական *(Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 306-309)*, քանի որ դրանք իրենց գեղարվեստական բարձրակետերին հասան մեկը՝ Տերյանի, մյուսն էլ՝ Թումանյանի ստեղծագործություններում: Պատմությունը հաղթանակ էր կանխորոշել տերյանական ուղղությանը, բայց, ինչպես նշվում է, «թումանյանական լեզվի հարստությունների ներընկալմամբ» *(Ռ. Իշխանյան, Արեւելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Ե., 1978, էջ 421)*:

Արեւելահայ բանաստեղծության շուրջ 250 տարվա ժամանակահատվածն ավարտվեց Տերյանի խոսքարվեստի երեւան գալով: «Մեր նոր լեզուն,– գրում է հայ բանաստեղծության լեզվի մեծագույն ռահվիրան,– այսպես կոչված ներկա գրական լեզուն, իբրեւ այդպիսին, ընդամենը գրեթե մի կեսդարյան կյանք ունի, որովհետեւ մինչ գրականության լեզու դառնալը նա չի ունեցել զարգացման մի կանոնավոր հուն...» *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1973, էջ 84)*: Տերյանի յուրօրինակ արվեստն էլ դարձավ գրական լեզվի՝ բանաստեղծի նախանշած զարգացման այն կանոնավոր հունը, առանցքը, որի շուրջ էլ պտտվեց հայ գրականության անիվը, իսկ ինքը՝ բանաստեղծը, հայ նոր գրականության լեզվի ամենախոշոր բարեփոխիչը, ամենաշատ հետեւորդներ ունեցողն ու մեր արքայական լեզվի ողջ հմայքը մարմնավորողը:

Տերյանի հայերենը դարձավ նոր սերնդի բանաստեղծական լեզվի հիմքը, իսկ գրական լեզվի բնականոն զարգացումն այդ լեզուն դարձրեց ուղենիշ ու չափանիշ: Տերյանի «Մթնշաղի անուրջներից» հետո հայ չափածոյի մեջ հեղաշրջում սկսվեց. ժողովրդաբարբառային լեզվական ուղղությունը վերջնականապես տեղի տվեց զուտ գրական ուղղության առջեւ: «Այն չմահացավ, իհարկե,– գրում է Ռ. Իշխանյանը,– բայց Տերյանի հանդես գալով՝ վճռվեց «ով ումի» հարցը. արեւելահայ բանաստեղծության մեջ եւ առհասարակ գեղարվեստական խոսքում վերջնական ու բացարձակ գերիշխանությունն անցավ զուտ գրական լեզվին» *(Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 348-349)*:

Տերյանի բանաստեղծական աշխարհն իր ինքնատիպ կառուցվածքով, յուրահատուկ բովանդակային արժեքներով, գեղարվեստական պատկերի, լեզվի եւ ոճի յուրօրինակությամբ նոր դարագլուխ բացեց հայ բանաստեղծական արվեստի պատմության մեջ: Բանաստեղծը մեծ տաղանդի կախարդանքով արարեց բանաստեղծական գոյավիճակների մի նոր աշխարհ՝ խոսքի բացառիկ հմայքով ու արծաթի պես զրնգուն լեզվով: Տերյանի չափածոյի առանձնահատկությունները, հարստությունները թաքնված են զգացմունքի ու հույզի նրբերանգներում, ուր կա ապրումի ու տրամադրության զարգացում: Ա. Տերտերյանի բնորոշմամբ՝ բանաստեղծի «յուրաքանչյուր տողը հազար ու մի խոհերի խտացումն է ներկայացնում» *(Ա. Տերտերյան, Վահան Տերյան. Ցնորքի, ծարավի եւ հաշտության երգիչը, Ե., 1910, էջ 98)*:

Եթե ընդունենք նաեւ այն հանրահայտ ճշմարտությունը, որ ոճը տաղանդի արտահայտությունն է, ապա ակնհայտ է, որ Տերյանն իր ինքնատիպ արվեստը չէր կարող ստեղծել առանց իր սեփական ձայնի, առանց անհատական ոճ ունենալու: Բանաստեղծը «առանց ցոյցի շեղեցաւ մեծերին սիրելի աւանդութիւններէն» *(Յ. Օշական, Արեւելահայ դէմքեր, Պէյրութ, 1999, էջ 217)* եւ բարեշրջեց արեւելահայ բանաստեղծության ընթացքը:

Տերյանը ոչ միայն չկրկնեց իր նախորդներին ու ժամանակակիցներին, այլեւ ստեղծեց իր ուրույն լեզուն ու ոճը՝ գրական դպրոցը: «10-15 տարի ստեղծագործեց Վահան Տերյանը,– գրում է Գ. Էմինը «Մաշտոցից մինչեւ մեր օրերը» հոդվածում,– եւ սակայն այդ 10-15 տարում ավելի քան հիսուն տարով առաջ մղեց հայ պոեզիան՝ աշխարհզգացումով ու գրական կուլտուրայով այն հասցնելով դարի ամենից առաջավոր մակարդակին» *(Գ. Էմին, Հոդվածներ Տերյանի մասին, Ե., 1984, էջ 115-116)*:

Տերյանը հայ գրականությունը դուրս բերեց նահապետական կյանքի շրջանակներից, հանեց շրջագծված գրական ավանդույթների շրջանակից՝ մոտեցնելով ժամանակակից մարդուն եւ ժամանակի մտածողությանը: Բանաստեղծն արեւելահայ պոեզիա ներմուծեց քաղաքային կյանքի ռիթմը: Նա մարդկային խոր ապրումների ու նուրբ հոգեվիճակների արտահայտիչը եղավ հայ պոեզիայում, դարձավ «քաղաքի առաջին երգիչը» *(Հ. Ղանալանյան, Վահան Տերյան, Ե., 1960, էջ 4)*: Տերյանի՝ իբրեւ ժամանակի գլխավոր ապրումների թարգմանի եւ իր ժամանակի հոգեկան դիմապատկերի ըմբռնումն էր Թումանյանին թելադրում արեւելահայ բանաստեղծական արվեստի պատմության մեջ տերյանական շրջանն առանձնացնել իբրեւ նոր սկիզբ:

Տերյանը նորարար է նաեւ հայ տաղաչափական արվեստի պատմության մեջ: Նրա ստեղծագործություններում կիրառված կառուցվածքային բազմազան ձեւերն ակտիվորեն մասնակցում են նաեւ գեղարվեստական ներդաշնակության ու երաժշտականության ստեղծմանը:

Շարունակությունը՝ էջ 8

ՈՐԻ ՄՆԱՑ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ

Ինչո՞ւ Երեւանում չունենալ արեւմտահայերենով ուսուցմամբ դպրոց:

Վերջին տարիներին Հայաստանում բնակություն են հաստատել Սիրիայից, Լիբանանից եւ այլ երկրներից ներգաղթած բազմաթիվ արեւմտահայեր: Բարով են եկել: Հայաստանը ոչ միայն արեւելահայի, այլեւ արեւմտահայի հայրենիքն է: Եվ հայրենիքը պարտավոր է ըստ ամենայնի հոգալ նրանց կեցության հարցերը:

Արեւմտահայ լեզվական միջավայրում մեծացած, առավել եւս դպրոց հաճախած աշակերտի համար ոչ թե դժվար, այլ շատ դժվար է ներգրավվել արեւելահայ կրթական գործընթացին: Ամենակարեւորը՝ տարբեր են ուղղագրությունը եւ ուղղախոսությունը:

Ինչ անել:

Առաջարկում եմ Երեւանում բացել արեւմտահայերենով ուսուցմամբ դպրոց: Ինչո՞ւ կլինեն ռուսական, անգլիական ուսուցմամբ, նաեւ ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն թեքումներով դպրոցներ, բայց չի կարող լինել արեւտահայերենով ուսուցմամբ հանրակրթական գոնե մեկ դպրոց: Նշված բոլոր լեզուներով ուսուցում կա, որովհետեւ կա նաեւ պահանջարկ: Ակնհայտ է, որ այսօր կա նաեւ արեւմտահայերենով ուսուցմամբ հրամայական պահանջարկ:

Այդ դպրոցը պետք է լինի կրթահամալիր՝ մանկապարտեզ, տարրական դպրոց, հիմնական դպրոց եւ ավագ դպրոց:

Ուսուցիչներ կան: Ուսուցչի խնդիր չի առաջանա:

Դասագրքերի հարց կառաջանա: Հանրակրթական դպրոցի գործող դասագրքերը կարելի է ենթարկել լեզվական փոխադրության եւ անհրաժեշտ քանակով հրատարակել: Տպագրական ժամանակակից միջոցներն ի վիճակի են արագ ու հեշտ լուծելու այդ հարցը:

Դպրոցը կունենա իր փոխադրամիջոցները, որով առավոտյան Երեւանի տարբեր թաղամասերից, թերեւս նաեւ մոտակա բնակավայրերից հնարավոր կլինի հավաքել սովորողներին, ուսուցիչներին եւ վերջում վերադարձնել իրենց տները:

Վստահ եմ, որ այդ դպրոցը կունենա իր հովանավորները, հոգաբարձուների խորհուրդը եւ կգտնվի ՀՀ Սփյուռքի նախարարության հոգածության ներքո: Այս պայմանների առկայության դեպքում ցանկալի է, որ ուսուցումը լինի անվճար:

Ցավալի է, որ արեւմտահայերենը դասվում է մեռնող լեզուների շարքին: Էլ որտե՞ղ, եթե ոչ հայրենիքում պետք է մտահոգվել այդ հարցով եւ պետականորեն խնամք տածել արեւմտահայերենի հանդեպ: Մեր հայրենիքի մեծ մասի՝ Արեւմտահայաստանի հիշողությունն ու ազատագրման երազանքը նաեւ արեւմտահայերենո՛վ պետք է պահպանվեն: Չմոռանանք՝ արեւմտահայության ցեղասպանության հետ մեկտեղ սպանվեց նաեւ լեզուն, ինչին ասում են լինգոցիդ, որ նույն գենոցիդի շարունակությունն է: Չկա լեզվի կրողը, չկա եւ լեզուն: Արեւմտահայերենը պահպանեցին ցեղասպանությունից փրկվածները, այլ կերպ՝ մնացորդացը:

Առաջարկում եմ նաեւ լրացում անել «Լեզվի մասին» ՀՀ օրենքում: Գրված է. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է Հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է»: Առաջարկում եմ վերջին նախադասությունը վերախմբագրել՝ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական արեւելահայերենն է եւ գրական արեւմտահայերենը»:

Հայ ժողովրդի համախմբման, հոգեկերտվածքի միասնության, մշակութային միաբանության, ոգեղեն ամբողջացման, հայրենիքի ամրապնդման գործում ՀՀ-ն պետք է վարի լեզվական շրջահայաց քաղաքականություն, ինչը կնպաստի նաեւ արեւմտահայության սերունդների նոր ներգաղթին, հայրենիքում նրանց հաստատմանն ու ամրապնդմանը: Այսինքն՝ արեւմտահայերեն խոսողները, գրողներն ու արտահայտվողները խորթություն չեն զգա, միջավայրից չեն օտարվի:

Միաժամանակ՝ արեւմտահայերենը պետք է պետականորեն պահպանվի, պաշտպանվի, զարգանա եւ նորմավորվի, ինչպես արեւելահայերենը: Նպատակը պետք է լինի պահպանել ինչպես գրական արեւելահայերենի, այնպես եւ գրական արեւմտահայերենի կենդանի զարգացման հնարավորությունները:

Չմոռանանք լեզվի հմայքով ու ճոխությամբ փայլատակող արեւմտահայ հարուստ գրականությունը, որ դասավանդվում է ՀՀ հանրակրթական դպրոցներում: Հապա մի ասեք՝ Դուրյան, Զոհրապ, Վարուժան, Մեծարենց, հիշեք նաեւ մյուսներին եւ կտեսնեք, թե ինչ տոհմիկ, թանկ ու հարազատ աշխարհ է բացվում ձեր առաջ:

Իսկ ինչու ՀՀ-ում չպետք է տպագրվեն արեւմտահայերեն թերթեր ու գրականություն, հատկապես՝ գեղարվեստական գրականություն, արեւմտահայերենը պիտի ինչի նաեւ հեռուստատեսային եւ ձայնասփյուռային հաղորդումներում:

Այս դպրոցը կդառա արեւմտահայերենի դարբնոց: Հավանական է, որ այսօրինակ դպրոցներ ունենալու պահանջ կներկայացնեն նաեւ արեւմտահայերով վերաբնակեցված այլ համայնքներ:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ —110

Սկիզբը՝ 2018-ի թիվ 21-24

Իսրայելյանի հայրենապաշտ ու ազգապաշտ լինելու մասին վկայում են նաեւ նրան ճանաչած մարդիկ: Լսենք նրանցից մի քանիսին. *«Ընդհանրապես Ռաֆայել Իսրայելյանի մեջ խիստ զարգացած էր ազգային ճարտարապետության, ազգային արվեստի բնական զգացողությունը: Իր կոմպոզիցիաներում նա հարկ չէր համարում դիմելու ձեւերի ուղղակի փոխառնման: Նրա աշխատանքներն ինքնին օժտվում էին ազգային հատկանիշներով»* (Մարկ Գրիգորյան):

«Հայահունչ էր Ռաֆոյի ողջ ստեղծագործությունը, ինչպես Սարյանի եւ Կոջոյանի նկարչությունը, Կոմիտասի եւ Խաչատրյանի երաժշտությունը: Ինչ էլ անելու լիներ՝ ստացվում էր հայկական, քանի որ մտածողությունն էր հայկական: Այդպես էր նույնիսկ այն դեպքում, երբ նախագծում էր ոչ Հայաստանի համար» (Վարազդատ Հարությունյան): Վ. Հարությունյանի խոսքում արտահայտված վերջին մտքի (*«Այդպես էր նույնիսկ այն դեպքում, երբ նախագծում էր ոչ Հայաստանի համար»*) հետ կապված մեջբերենք Յուրի Յարալովի հիշողություններից մեկը. *«1972-ին Ռաֆոն, ի թիվս երկրի տասը ամենանշանավոր ճարտարապետների, իրավունք ստացավ մասնակցելու Մոսկվայում կառուցվելիք՝ Լենինի թանգարանի նախագծի մրցույթին: Նա արեց նախագիծը, բայց չափից դուրս «հայկական», եւ մայրաքաղաքի հասարակայնությունն ու մրցույթի ժյուրին դա չհասկացան ու չգնահատեցին ինչպես հարկն էր»*:

«Հոգեկան այն կապը, որ ուներ հայրենի երկրի, նրա պատմության, հոգեւոր գանձերի նկատմամբ, բացառիկ ուժի էր հասնում: Մոլեռանդ հայրենասեր էր:

Թղթի մի կտորի վրա նախշ նկարեր թե հսկայական մի շենք կառուցեր, գինու մի գավ պատրաստեր թե մոնումենտ կառուցեր, նպատակը նույնն էր - հաստատել մեր ժողովրդի հոգեկան բարձր կերտվածքը: Ամեն ինչ այս գաղափարից էր գալիս, որ նրան դարձնում էր մոլեռանդ: Սկզբունքային էր միչեւ վերջ» (Ռուբեն Զարյան):

Վազգեն Ա-ի՝ Սուրբ Էջմիածնի մայր տաճարում Ռաֆայել Իսրայելյանի հոգեհանգստի արարողության ժամանակ արտասանած խոսքից ստորեւ մեջբերվող հատվածը, կարելի է ասել, տալիս է Իսրայելյան արվեստագետի ու հայի ամփոփ բնութագիրը. *«Նա 40 տարիներ շարունակ եղավ մեր տաղանդավոր ճարտարապետներից մեկը եւ գուցե բոլորից ամենահայը՝ ճարտարապետական տեսակետից: Ռաֆայել Իսրայելյանը ինչ որ թղթին էր հանձնում եւ իրականացնում, հնարավոր չէր, որ հայադրոշմ չլիներ: Ինձ թվում է՝ նա ոչ թե պարզապես դասական մեր հին ճարտարապետությունից կամ քանդակագործությունից ներշնչվում եւ հինը փոխադրում էր նորի մեջ՝ հին խոսքը նոր լեզվով ասելու համար, այլ մի բանով ավելի էր: Նա գնում էր իր տաղանդի լույսի առաջնորդությամբ, իր ներքին զգացողության լույսով, դեպի հայ ճարտարապետության սկզբնաղբյուրները եւ այնտեղից վերադառնում նորին: Մի տեսակ՝ իր մեջ կրկնվում էր հայ ճարատարապետության եւ քանդակագործության պատմական զարգացման ամբողջ ընթացքը: Այս իմաստով՝ Ռ. Իսրայելյանը, կարող ենք ասել, ապրեց հազար հինգ հարյուր տարիների գանձարանը իր հոգու մեջ առած: Այդպես ապրեց ու աշխատեց նա ու նոր ստեղծագործություններով հարստացրեց հայ ժողովրդի արվեստի գանձարանը:*

... Նրա գիտակցության եւ զգացողության մեջ ճարտարապետությունը եւ քանդակագործությունը ինչ որ առանձնացած

երեւույթներ չէին, այլ կազմում էին անբաժանելի, օրգանապես անբաժանելի մասը հայ մշակույթի եւ հայ ոգեկանության: Նա հավասար չափով պաշտամունքն ուներ հայ բանաստեղծության, հայ նկարչության, հայ երաժշտության եւ համարյա թե չէր բաժանում այդ արժեքները քանդակագործական արվեստից եւ ճարտարապետությունից: Նա հավասար չափով պաշտում էր ս. Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Թումանյանին, Եղիշե Չարենցին, Կոմիտաս մեծ Վարդապետին եւ վարպետ Մարտիրոս Սարյանին»:

Մեծ արվեստագետն այն համոզմանն էր, որ ճարտարապետությունը պիտի հայրենիք ունենա, այն պիտի ներկայացնի տվյալ երկրի ձեռակերտ դեմքը. իր այս միտքը նա կրկնում էր բազմաթիվ ելույթներում ու նախագծերի քննարկումներում:

Իսրայելյանական ստեղծագործությունները սերունդներին հաղորդում ու վերահաղորդում են դարերի խորքից եկող հայկական ոգու վեհությունը, առնականությունը, ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, գեղեցկությունը... մի խոսքով՝ այդ ստեղծագործություններում խտացված է հայ հոգեկերտվածքը:

Մեծատաղանդ ճարտարապետը, հերոսամարտերի ու հաղթանակների հուշարձաններ ու հուշահամալիրներ ստեղծելով՝ ոչ վաղ անցյալում կիսով չափ ոչնչացված իր ժողովրդի համար, կարծեք, ասում էր, որ մեկընդմիշտ անցյալում պիտի մնան նրա կորուստները, ողբն ու տառապանքը, հետայսու միայն նվաճումներ ու հաղթանակներ են լինելու:

Իսրայելյանը կարողացավ տեւական պատմական ընդհատումից հետո, ընդ որում՝ պետականության բացակայության պայմաններում, ստեղծել նոր, խորապես ազգային ճարտարապետություն՝ խարսխված միջնադարյան ազգային ճարտարապետական ավանդույթների վրա:

Շարունակությունը՝ էջ 8

Առաքելական Ա եւ Բ կանոնախմբերը եւ նրանց համեմատական վերլուծությունը

Սկիզբը՝ 2018-ի թիվ 24

Ինչ Կտակարանը պարունակում է նաեւ առաքյալների գործերը եւ ավետարանիչների քարոզության խոսքերը: Եվ այս ամենից բացի՝ ուրիշ բան պետք չէ կարդալ խորանի վրա: Կանոնախումբը եզրափակվում է ԼԴ կանոնով *(տես նույն տեղում, էջ 49-66)*, որտեղ խոսվում է այն մասին, թե որ առաքյալին քարոզչության համար որ շրջանը, որ աշխարհն է վիճակվում: «Կանոնք առաքելականք» կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ը, այսինքն՝ Առաքելական Ա կանոնախումբն ասորերենից հայերեն է թարգմանվել 547 թվականին՝ Ներսես Բ Բագրեւանդցու (548-557), Ներշապուհ եպիսկոպոսի եւ Աբդիշոյի կողմից: Մերօրյա անվանի տոմարագետ, կանոնագետ Ռաֆիկ Վարդանյանի բացահայտմամբ՝ ասորական առաքելական կանոններում կան խմբակարգված հատվածներ, որտեղ թարգմանիչ-խմբագիրներն օգտվել են Սահակի կանոնական թղթերից *(այս մասին առավել մանրամասն կարելի է կարդալ Ռ. Հ. Վարդանյան, «Հայոց տոնացույցը (14-18-րդ դարեր), Եր., 1999, էջ 45-63)*: Ուսումնասիրող Հակոբոս Տաշյանը եւս նկատել է, որ համարժեքություններ կան Ներսեսի, Ներշապուհի եւ Սահակի կանոնների միջեւ: Եվ Սահակ կաթողիկոսի հենց բուն գրած կանոնները կարելի է գտնել «Յաղագս քորեպիսկոպոսաց» եւ «Նորից կարգ քահանայից» կանոնական խմբերում: Այսքանով ավարտենք մեր խոսքը «Կանոնք առաքելականք»-ի վերաբերյալ եւ անցում կատարենք առաքելական Բ՝ «Երկրորդ առաքելական կանոնիս (գլուխ ՁԵ (85)» կամ «Կանոնք առաքելականք ի ձեռն Կղեմայ» կանոնախմբի վերլուծությանը: Որպես բաղդատություն՝ նշենք, որ արդեն առաքելական Բ կանոնախմբի որոշումներում մենք ականատես ենք լինում կարծես արդեն կազմավորված նվիրապետական կուռ համակարգի, որտեղ հիմնականում խոսվում է հոգեւորականների գործունեության մասին: Այստեղ հստակորեն տարանջատված են եպիսկոպոսը, երեցը, սարկավագը, ինչը թերեւս չենք կարող ասել առաքելական Ա կանոնախմբի վերաբերյալ, չնայած վերջինում եւս խոսվում էր կիսասարկավագների, սարկավագների եւ երեցների մասին: Բայց արդեն առաքելական Բ-ում այդ ամենն առավել կարգավորված եւ համակարգված տեսք է ստանում: Մեր ընթերցողին չձանձրացնելու եւ շարադրանքը չծանրացնելու նպատակով չենք անդրադառնա բոլոր 85 կանոններին առանձնաբար, կներկայացնենք դրանցից առավել առանցքայինները, իսկ մնացյալը՝ համակարգված ձեւով: Ա եւ Բ կանոնները *(տես «Կանոնագիրք Հայոց», հատոր Ա, էջ 75)* եպիսկոպոսների ձեռնադրության մասին են, որոնցում մասնավորաբար խոսվում է այն խնդրի շուրջ, թե եպիսկոպոսը պետք է ձեռնադրվի 2 կամ 3 եպիսկոպոսի ձեռքով, եւ սարկավագը, երեցը, որ ձեռնադրվելու են, պարտադիր պետք է լինեն եպիսկոպոսի ժառանգ: Այս վերջինը մանավանդ շատ հետաքրքրական է, որը ցույց է տալիս նվիրապետական կարգի ժառանգական լինելը: Ժառանգաբար էր անցնում նաեւ հայրապետական գահը: Կարելի է մտաբերել, օրինակ, Լուսավորչի տոհմի ժառանգորդներին: Ե կանոնը *(տես նույն տեղում, էջ 76)* կնաթող քահանայի մասին է, որը սահմանում է, թե որեւէ երեց կամ սարկավագ իր կնոջը թող վախի պատճառով բաց չթողնի, իսկ եթե այդպես վարվի, թող հեռացվի, եթե համառ գտնվի, թող կարգալույծ արվի: Է կանոնը *(տես նույն տեղում)* վերաբերում է Սուրբ Զատկին, որտեղ սահմանվում է, որ որեւէ եպիսկոպոս, երեց կամ սարկավագ սուրբ տոնը պետք է կատարի գարնանային օրահավասարից (մարտի 20) հետո, եւ եթե մեկը այդպես չանի, թող կարգալույծ արվի: Այստեղ անչափ հետաքրքրական է հետեւյալ իրողությունը, որ փաստորեն սկզբնական ժամանակաշրջանում ծիսակատարություն կատարելու իրավունք են ունեցել նաեւ սարկավագները: Գարնանային օրահավասարին հաջորդող լիալուսնից հետո՝ առաջին կիրակի օրը, Սուրբ Զատիկ տոնելը սահմանվում է նաեւ Նիկիայի տիեզերաժողովում, այսինքն՝ տոնն ունի 35-օրյա շարժականություն, կարող է տեղի ունենալ մարտի 21-ից ապրիլի 25-ն ընկած հատվածում: Անցում կատարենք ԺԱ կանոնին *(տես նույն տեղում, էջ 77)*, որը կարգալույծ եղած քահանայի մասին է: Որոշումը սահմանում է, որ եթե ինչ-որ մեկը լուծարվում է քահանայությունից, եւ վերջինիս մեկ այլ քահանա աղոթակից է լինում, պետք է նաեւ այդ քահանան լուծարվի իր կարգից: ԺԵ որոշումը *(տես նույն տեղում, էջ 79)* կարգադրում է, որ չի կարելի ձեռնադրել մկրտությունից հետո 2 անգամ ամուսնացած մարդուն կամ այնպիսի մեկին, որը հարճ է վերցրել: Նման մարդիկ չեն կարող լինել եպիսկոպոս, երեց կամ սարկավագ: Պակաս հետաքրքրական չէ ԺԹ կանոնը *(տես նույն տեղում)*, որն այն մարդկանց մասին է, որոնք ակամա ներքինացվել են: Եվ եթե դա արվել է բռնությունից կամ հալածանքներից պրծնելու համար, եւ տվյալ անձն արժանի է եպիսկոպոսական ձեռնադրության, թող ձեռնադրվի: Բավականին կարեւոր խնդրի է անդրադառնում կանոնախմբի ԼԳ որոշումը *(տես նույն տեղում, էջ 84)*, որը տեղեկացնում է այն մասին, թե եպիսկոպոսն իրավունք չունի ուրիշ թեմում ձեռնադրություն կատարելու: Նա իրավունք չունի ձեռնադրություն կատարելու իր վիճակի սահմաններից դուրս բոլոր այն տեղերում, որոնք իր իշխանությանը չեն պատկանում: Եվ եթե եպիսկոպոսն այդպես անի, թող իր ձեռնադրածը լուծարվի: Այս հարցը եւս կարեւորներից էր, որը թույլ չէր տալիս մի վիճակի եպիսկոպոսին որեւէ գործողություն կատարել այլ թեմում, որի վերատեսուչն ինքը չէր: Հետաքրքրական է, որ այսօր էլ հայոց մեջ այսպես է: ԼԵ կանոնը *(տես նույն տեղում)* քննարկում է եպիսկոպոսների հետ կապված թեմական շատ կարեւոր խնդիր, որը վերաբերում էր տարվա մեջ 2 անգամ եպիսկոպոսական ժողով գումարելուն, որոնցից առաջինը պետք է լիներ Պենտեկոստեից (Հոգեգալուստ) հետո՝ 4-րդ շաբաթում, իսկ երկրորդը պետք է տեղի ունենար աշնանը: Որոշումն իսկապես առանցքայիններից է, քանի որ շատ կարեւոր խնդիր է սահմանում, որ տարվա մեջ գոնե 2 անգամ պիտի հավաքվեն եպիսկոպոսները եւ թեմական խնդիրները քննարկեն: Ինչպես նշեցինք մեր վերոնշյալ խոսքում, «Կանոնագիրք հայոց» ժողովածուներում կան շատ կանոններ՝ վերաբերող վաշխառությանը: Այդպիսի մի սահմանման հանդիպում ենք առաքելական Բ կանոնախմբի ԽԲ կանոնում *(տես նույն տեղում, էջ 87)*, որը մասնավորաբար վերաբերում է եպիսկոպոսի, քահանայի կամ սարկավագի կատարած վաշխառությանը, եւ եթե գտնվի այդպիսի մեկը, ով տոկոս կամ վաշխ պահանջի, կամ պիտի դադարեցնի իր գործունեությունը, կամ պետք է լուծարվի: ԿԴ կանոնը *(տես նույն տեղում, էջ 92)* չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը պահելու մասին է, եւ եթե որեւէ հոգեւորական չպահի, թող լուծարվի, իսկ եթե կա հիվանդության առկայություն, թույլատրվում է այդ օրերի պահքը լուծել: Բայց եթե չկա ոչ մի պատճառ, եւ ինչ-որ մեկը ժողովրդից չի կատարում կարգը, պետք է հեռացվի եկեղեցուց: ՀԳ կանոնը *(տես նույն տեղում, էջ 95)* խոսում է դիվահարության մասին: Այդպիսի խնդրի վերաբերյալ եւս բազմաթիվ կանոնների կարելի է առնչվել «Կանոնագիրք հայոց»-ում: Բայց այստեղ կոնկրետ խոսվում է այն մասին, որ եթե մեկը դիվահար է, այսինքն՝ իր մեջ դեւ ունի, չի կարող ձեռնադրվել: Կարգը կարելի է կատարել միայն այն ժամանակ, երբ տվյալ անձն արդեն մաքրված է, եւ որ ամենակարեւորն է, արժան է ձեռնադրության: Զ եւ ՁԱ կանոնները վերաբերում են մկրտության խնդրին, բայց իրենց բնույթով ոչ միայն ծիսական են, այլեւ դավանաբանական: Կանոնը սահմանում է մկրտությունը կատարել Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու՝ Ամենասուրբ Երրորդության անունով՝ հիմք ընդունելով Մատթեոս ԻԸ 19-ը տեղին. «Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով»: Եվ թող քահանայական կարգից ու պաշտոնից զրկվի այն անձը, որը մկրտությունը կատարում է 3 Հոր, 3 Որդու եւ 3 Հոգու անունով: Քանզի Սուրբ Երրորդությունը մեկ էություն է, մեկ բնություն, մեկ աստվածություն, բայց 3 Անձ, որ տարբերվում են զուտ Իրենց հատկանիշներով. Հայրը՝ անծին, Որդին՝ ծնված Հոր էությունից, եւ Հոգին, որ բխում է Հորից եւ տրվում է Որդու միջոցով: Բայց մեկ աստվածություն է, մեկ աստվածային կամք, մեկ զորություն եւ մեկ իշխանություն: Այդ իսկ պատճառով չի կարելի համարել 3 Աստված, ինչպես հասկացել եւ ընկալել են շատերը՝ հիմք դնելով տարբեր աղանդների: Այսքանով ավարտենք մեր աշխատանքը, որը վերաբերում էր առաքելական Ա եւ Բ կանոններին եւ դրանց վերլուծությանը, որոնք մեծ դեր են խաղացել եկեղեցական շատ հարցեր հիմնադրելու եւ հիարկե՝ կարգավորելու գործում:

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

Միայնակ Սուրբ Ծննդին

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

Սկիզբը՝ 2018-ի թիվ 23-24

Երեցեք ինձ, չեմ ուզում այսօր ուսուցիչ դառնալ ձեր գլխին: Գիտեմ, որ այլ բան է խոսել վշտահար, միայնակ մարդկանց հետ, եւ այլ բան՝ հենց ինքդ լինել միայնակ մարդ: Խորհուրդներն այնքա՛ն հեշտ է տալը: Դրա համար էլ ոչ թե սովորեցնում եմ ձեզ, այլ պարզապես զրուցում ձեզ հետ: Հիշեցի Իսահակ Սիրոսի խոսքերը, որ ասում է. «Փորձիր զգալ, որ այս աշխարհում միայն դու ես ու Աստված եւ փորձիր խաղաղություն զգալ սրտիդ մեջ»: Եվ դա չպետք է լինի եսասիրաբար, այն զգացողությամբ, որ ուրիշները քեզ պետք չեն, նրանց նշանակություն էլ չես տալիս, այլ պարզապես զգաս, որ Աստված սիրում է քեզ այնքան շատ, որ կարծես այս աշխարհում միայն դու գոյություն ունես, զգաս, որ Աստված այսօր գալիս է հատուկ քեզ համար, չի վազում միայն հյուրասենյակները, ուր մարդկանց բազմությունն է՝ քեզ ասելով. «Սպասիր, այսօր այլ գործեր ունեմ»: Հիշիր, որ Քրիստոս աշխարհ կգար նաեւ այն դեպքում, երբ միայն մեկ մարդ գոյություն ունենար ողջ երկիր մոլորակի վրա: Ի՞նչ անծայրածիր սեր է դա: Այսօր ոչ ոք քեզ չի՞ զանգահարել: Կարծում եմ՝ մինչեւ հաղորդման ավարտը որոշ զանգեր կստանաս Պիրեասի եկեղեցու հոգեւոր եղբայրներիցդ ու քույրերիցդ: Բայց եթե նույնիսկ ոչ ոք այդպես էլ քեզ չզանգահարի, իմացի՛ր, որ Քրիստոսը սիրում է քեզ եւ այսօր կատարելապես նվիրվել է քեզ: Եվ դա կօգնի քեզ հոգեւոր ամբողջականություն զգալու, կախված չզգալու քեզ ուրիշներից, քո ուրախությունը չկապելու ուրիշների հետ, հասկանալու, որ չնայած Աստված բաժանվում է բոլոր մարդկանց մեջ, բայց միաժամանակ յուրաքանչյուր մարդու ամբողջությամբ է տրվում: Եվ դա հասկանալով՝ կկարողանաս ուրախանալ ուրիշների ուրախությամբ, չնախանձել ու չատել նրանց: Կան այդպիսի մարդիկ, որ երբ տեսնում են՝ ուրիշներն ուրախանում են, ուզում են վրեժ լուծել նրանցից, նախանձում են, զայրանում, նյարդայնանում, մտածում. «Ինչո՞ւ նրանք ուրախանան, իսկ ես տխրեմ»: Բայց դու այդպես մի՛ եղիր, այլ ասա՛. «Ես ունեմ իմ Աստծուն, իմ Քրիստոսին, Նա կամեցել է, որ այսօր մենակ լինեմ, գիտեմ, որ սիրում է ինձ, եւ դիմանում եմ»: Քեզ մի այլ բան էլ ասեմ: Հիմա կեսօր է, չէ՞, կարող է՝ մինչեւ երեկո քեզ հետ ինչ-որ հրաշք կատարվի: Չգիտես՝ ինչ կարող է լինել, կարող է՝ հոգուդ մեջ փոփոխություն տեղի ունենա, կարող է՝ ինչ-որ բան լսես, տեսնես, մտածես, մի ինչ-որ բան տեղի ունենա, որ ուրախացնի քեզ: Թույլ մի՛ տուր, որ տխրությունն իշխի քեզ վրա, հույսո՛վ լցվիր, թույլ մի՛ տուր, որ հույսը, որ կա հոգուդ մեջ, մեռնի: Սպասի՛ր եւ կտեսնես:

Գիտեմ, որ հիմա լսում են նաեւ նրանք, ովքեր լավ ժամանակ են անցկացնում: Ձեզ մի բան ասե՞մ. դուք, որ լսում եք եւ լավ ժամանակ անցկացնում, դուք, որ չունեք այն բոլոր խնդիրները, որոնց մասին խոսում ենք հիմա, եւ շուտով կկանգնեցնեք ձեր մեքենան, կանջատեք ռադիոընդունիչը եւ կգնաք այն տուն, ուր ձեզ սպասում են՝ զվարճանալու, աղոթեք նրանց համար, ում անմիջականորեն վերաբերում է այս թեման, ովքեր կշարունակեն լսել այս հաղորդումը, որովհետեւ այլ ընկեր չունեն այսօր: Թող աղոթքն ու սերը մեր անբաժան ուղեկիցը լինեն, որպեսզի նրանք էլ, ովքեր կշարունակեն լսել այս հաղորդումը, միայնակ չզգան իրենց:

Մեկ այլ բան էլ ասեմ քեզ. տխրությունը մեր կյանքի մշտական ուղեկիցն է, նույնիսկ



մեր կյանքի ամենաուրախ պահերին ինչ-որ ներքին տխրություն ենք զգում: Այս մասին սկզբում էլ ասացի: Կազանձակիսը *(հույն հայտնի գրող (1883-1957 թթ.)*, գնալով Աթոսի վանքերից մեկը (կարծեմ՝ Սուրբ Դիոնիսիոսի փոքրիկ վանքը), ասում է մի վանականի. «Շատ նեղ է ձեր վանքը, ինձ այստեղ ճնշված եմ զգում»:

Շարունակությունը՝ էջ 7

ՁԻԱՀ՝ դատավճիռ, թե՞...

Սկիզբը՝ 2018-ի թիվ 24

Վայամիի համալսարանի պրոֆեսոր Գեյլ Այրոնսոնը, որը տարիներ շարունակ հետեւում է Շերիի առողջական վիճակին եւ զբաղվում է ՁԻԱՀ-ի հետ կապված գիտական աշխատանքներով, հետաքրքրվում է, թե արդյոք Շերին տառապում է հիվանդությանն ուղեկցող նշաններով: Պատասխանը բացասական է: Կապլանը երբեք չի ընդունել ոչ մի դեղորայք, սակայն հիվանդությունն այդքան տարիների ընթացքում չի զարգացել: Դոկտոր Այրոնսոնը նշում է, որ երբ հարցնում է մարդկանց, թե ինչն է նրանց դարձնում առողջ եւ օգնում այսքան երկար դիմակայել հիվանդությանը, նրանք պատասխանում են՝ «Հավատը»: Նա առաջին գիտնականն է, որը ցույց տվեց կապն Աստծո եւ օրգանիզմում տեղի ունեցող քիմիական տարօրինակ փոփոխությունների միջեւ: Նրա ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել կապը ՁԻԱՀ-ի եւ հավատի միջեւ, ինչը երեւում է մարդու իմունիտետից: Որքան խոր է մարդու հավատը, այնքան առավել դրական փոփոխություններ են նկատվում նրա առողջական վիճակի մեջ:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 1988 թ. – 2018 թ. հոկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 3269 դեպք, որոնցից 361-ը՝ 2018 թ. ընթացքում: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3400 (www.armaids.am): ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում 8 տարվա աշխատանքի շրջանակներում հոգեթերապիայի են դիմել հարյուրավոր հիվանդներ, որոնք կարիք ունեին հոգեբանական օգնության՝ հիվանդության հետ պայքարի հարցում, ինչպես նաեւ նոր կարգավիճակում հասարակության մեջ իրենց տեղը գտնելու գործում: Հոգեթերապիան կատարվել է նարեկաբուժության միջոցով: Խնդիրը նման հիվանդների հոգեւոր արժեքների վերականգնումն էր, քանի որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ մարդիկ, շատ անգամ շեղվելով ճշմարիտ ուղուց, կորցնում են այն ոգեղենությունը, որն անհրաժեշտ է հոգուն: «Նարեկը» կարծես հայելի է. ցույց տալով մարդու մեղքերը՝ բերում է նրան զղջանքի եւ հնազանդության, տալիս է նրան հուզող շատ հարցերի պատասխաններ, վերափոխում է աշխարհընկալումը: Նարեկաբուժության ազդեցությունը հիվանդության ընթացքի վրա շատ հետաքրքիր էր. հիվանդի հոգեկան վիճակի դրական փոփոխություններն անմիջապես արտացոլվում էին նրա ֆիզիկական ինքնազգացողության վրա, որն իր հերթին նպաստում էր իմունային համակարգի ակտիվացմանը՝ բերելով ՄԻԱՎ վարակի վիրուսային ծանրաբեռնվածության նվազմանը: Պետք է նշեմ, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին ուղեկցող նեյրոկոգնիտիվ խանգարումները դեղորայքային բուժմանը դժվար են ենթարկվում: Ըստ վիճակագրական տվյալների՝ 20-25% ՄԻԱՎ վարակակիրների պարագայում մինչեւ ՀՌՎ (հակառետրովիրուսային բուժում) ստանալը եւ ստանալուց հետո կոգնիտիվ խանգարումները պահպանվում են: Նեյրոկոգնիտիվ խանգարումը շատ լուրջ ասպեկտ է ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր հիվանդների կյանքում, քանի որ այն բերում է շարժողական, ճանաչողական բնույթի, վարքագծի եւ հիշողության խանգարումների, ինչը գցում է կյանքի որակը, նվազեցնում է աշխատունակությունը եւ բազմաթիվ դժվարություններ է ստեղծում մարդու առօրյա կյանքում: Այսպես, օրինակ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակիր հիվանդներից մեկը պատմում էր, թե ինչպես մի օր, բացելով դրամապանակը եւ այնտեղ տեսնելով 20.000 դրամ անվանական արժեքով թղթադրամը, չէր կարողանում հասկանալ, թե այն ինչի համար է, եւ որտեղ են այն օգտագործում: Ստորեւ կցանկանամ մեջ բերել մի հիվանդի ուղիղ խոսքը, որը «Նարեկով» բուժման արդյունքում հաղթահարել է իր հոգում բուն դրած ատելությունը. ատելություն՝ իր ամուսնու նկատմամբ, որը դարձել էր իր հիվանդության պատճառը, եւ ատելություն՝ կյանքի նկատմամբ, ինչը բերեց թե՛ հոգեկան եւ թե՛ ֆիզիկական շատ բարդ վիճակի (իշողության խանգարում, ընկճախտ, մահվան վախ, կյանքի հանդեպ անտարբերություն, հուսահատություն):

«Ատելությունս անսահման էր, չարացել էի: Չէի կարողանում ներել ամուսնուս եւ անընդհատ մեղադրում էի նրան իմ հիվանդության եւ տառապանքների համար: Հիմա, երբ կարդում եմ ժամանակին արված գրառումներս, չեմ հավատում, որ այդքան ատելություն ու չարություն է եղել իմ մեջ: Մեղա Աստծո, ո՞վ եմ ես, որ ատեմ Աստծո ստեղծածին: Շատ-շատ եմ փոխվել. շատ քիչ եմ բարկանում, ավելի ճիշտ՝ չեմ «կատաղում»: Որ հիշում եմ՝ սրանից առաջ ինչքան թույլ էի, չէի կարողանում մահճակալից վեր կենալ, չէի ուզում շփվել մարդկանց հետ ու հիմա ինչքան լավ եմ ինձ զգում, տարբերությունն ահավոր նկատելի է: Ոնց են ինձ օգնում, ոնց են ինձ ուժ տալիս աղոթքները. ես շատ լավ եմ ինձ զգում թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես: Ես ինձ զգում եմ փոքր երեխայի նման, որին տվել են այն, ինչի համար նա շատ էր լացել: Հիմա ավելի ու ավելի եմ համոզվում, որ անբուժելի հիվանդություն չկա, կա անբուժելի ուղեղ: Եթե հիվանդ է գիտակցությունը, միտքը, մարդը չի կարող առողջ լինել»:

Մեկ այլ օրինակ, որը եւս արտացոլում է ՁԻԱՀ վարակակիր հիվանդի հոգեկան վիճակը բուժումից առաջ եւ հետո:

«Տարվել էի խմիչքով եւ թմրանյութ էի օգտագործում: Չարացած էի բոլորի, այդ թվում՝ Աստծո վրա: Երբ մի քիչ նեղն էի ընկնում, սկսում էի մեղադրել Աստծուն՝ նաեւ նյութական նեղությունների ժամանակ: Երբ իմացա իմ հիվանդության մասին, վախի զգացումը սպանում էր ինձ: Չէի հավատում, չգտեի, թե ինչ անեմ: Օգնություն էի փնտրում, բայց չգիտեի՝ որտեղից ստանամ այն: Մի քանի երկրներում հետազոտվելուց հետո վերադարձա հայրենիք: Այստեղ էլ հաստատվեց այդ հիվանդությունը՝ ՁԻԱՀ-ը: Ուզում էի գտնել այն մեկին, որից վարակվել էի ու սպանել: Եթե կարողանայի ինքնասպան լինել, կգնայի այդ քայլին: Անցել է չորս տարի այն օրվանից, ինչ իմացել եմ հիվանդության մասին: Հիմա շնորհակալ եմ Աստծուն: Այս հիվանդության պատճառով շատ չարչարանքներ տեսա, մինչեւ անգամ մահվան դուռը գնացի, բայց նաեւ շնորհակալ եմ, որովհետեւ սկսել եմ ճանաչել Տիրոջը եւ Նրա հրաշքները: Այսօր իմ կողքին կա մի անձնավորություն, որի համար ես իմ հիվանդությանն էլ եմ շնորհակալ»: Հիվանդությունը նույնն է այս բոլոր հիվանդների պարագայում, բայց նրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մեկը մյուսից իր ապրումներով, մտքերով, ընկալումներով: Ամեն մի հիվանդ պահանջում է անհատական մոտեցում, քանի որ գործ ունենք մարդկային կյանքի տարբեր պատմությունների եւ ճակատագրերի հետ: Եվ չնայած կյանքի տարբեր ուղիներին, կա հավատի՝ փրկության ճանապարհը, որը նույնն է բոլորի համար: Տեսնելով հոգեւոր արժեքների այսպիսի ակնհայտ փոփոխություններ՝ համոզվում ես, որ հիվանդությունն ազդանշան է՝ ցույց տալու մարդուն, որ իր կյանքում մի բան այն չէ, եւ որ պետք է մի պահ կանգ առնել եւ մտածել. «Իսկ արդյո՞ք ես ամեն ինչ ճիշտ եմ անում»: Եվ շատ անսպասելի էր հիվանդներից լսել, որ իրենք շնորհակալ են իրենց հիվանդության համար: Թվում է, թե անբուժելի համարվող այս հիվանդության համար ինչպես կարելի է շնորհակալ լինել, բայց փաստորեն այն տվել է այս մարդկանց շատ ավելին՝ հոգեւոր աճ, հավատ առ Աստված:

Հին ժամանակներում, երբ չկային ժամանակակից բժշկությունն ու հոգեբուժությունը, ծանր հիվանդությունների ժամանակ մարդիկ դիմում էին իրենց հոգեւոր առաջնորդներին (շամաններին, հոգեւոր ծառայողներին եւ այլն): Տարբեր մշակույթներում հոգեւոր ներաշխարհը դիտվում է որպես կյանքի էներգիա եւ ուժ ստանալու աղբյուր:

Հավատը բերում է մարդու արժեքային համակարգի վերափոխմանը, արժեքների վերաիմաստավորմանն ու վերագնահատմանը: Մարդն սկսում է առավել քան երբեւէ արժեքավորել կյանքը՝ վայելելով յուրաքանչյուր օրը, գնահատելով ու կարեւորելով այն ժամանակը, որը նա անց է կացնում իր սիրելի եւ հարազատ մարդկանց հետ, հիանալով բնության գեղեցկությամբ, վերապրելով ներկա պահը՝ չհետաձգելով այդ պահը վերապրելու հաճույքը: Այսպիսով՝ գտնել կյանքի իմաստը, ընդունել հիվանդությունը որպես փորձություն՝ կատարյալին հասնելու համար, եւ վերագտնել սերը սեփական անձի նկատմամբ. սա է հոգեւոր ճանապարհորդության մի մասը:

Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ
Բժշկական գիտ. թեկնածու,
հոգեթերապեւտ, նարեկաբույժ

ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ...

Սկիզբը՝ էջ 6

Եվ վանականը նրան ասում է. «Ողջ աշխարհն է նեղ, այս աշխարհի, այս կյանքի տարածության ու ժամանակի մեջ չենք տեղավորվում, դրա համար էլ մի քիչ տխուր ենք միշտ, կատարյալն ենք ուզում, անծայրածիրը, շատը, որը չենք կարող ունենալ այս կյանքում»: Այսպիսով՝ մեր կյանքում միշտ առկա է տխրությունը, միայնակությունը, նույնիսկ՝ մարդկանց բազմության մեջ:

Հիշում եմ՝ երբ փոքր էի, նկարչության մի ուսուցչուհի ունեինք, որ նպատակ էր դրել մեր շրջանում կավե իրերի, նկարչության ու ձեռքի աշխատանքների ցուցահանդես կազմակերպել: Եվ հաջողեց: Հավաքվեց մեծ բազմություն, եկան քաղաքապետը, եպիսկոպոսը, երաժշտություն հնչեց, ցուցահանդեսի բացման խոսքեր ասվեցին: Ես՝ մի զվարթ երեխա, մտածում էի ինքս ինձ. «Պա՜հ, հիմա ինչքա՜ն է ուրախացել ուսուցչուհիս, վերջապես նպատակին հասավ, երազանքն իրականացավ»: Եվ մարդկանց բազմության միջով, որ անդադար մոտենում էին ուսուցչուհուս եւ նրան շնորհավորանքի ու գովեստի խոսքեր ասում, մոտեցա նրան եւ ասացի. «Տիկի՛ն, պատկերացնում եմ՝ ինչ ուրախ ու երջանիկ եք այսօր: Եղավ Ձեր ուզածը»: Եվ նա ասաց ինձ. «Չե՞ս լսել, որ բազմության մեջ կարող ես մենություն զգալ»: Ապշեցի: Ասացի նրան. «Կներեք, այդպե՞ս եք զգում»: Ասաց. «Դե որ դա ասում եմ քեզ, ուրեմն այդպես եմ զգում»: Այդ պահին մի մարդ մոտեցավ՝ նրան շնորհավորելու, եւ մեր խոսակցությունն ընդհատվեց, ու այլեւս ինձ վրա ուշադրություն չդարձրեց երեկոյի ընթացքում: Անցել է 20 տարի, եւ մինչեւ հիմա հիշում եմ նրա խոսքերը. «Բազմության մեջ կարող ես մենություն զգալ»: Տոնական սեղանի առջեւ կարող է մարդուն տխրության ալիքը պատել: Այս կյանքի ուրախությունը հարաբերական է եւ միշտ խառնված ցավի, դառնության, դատարկության հետ: Միշտ մի բան մեզ հիշեցնում է, որ երկրի վրա ենք, ներքեւում, Աստծու մոտ չենք՝ լուսավոր, դալար, հանգստի վայրում, ուր չկան ցավ, վիշտ եւ հառաչանք, դրա համար էլ կատարյալ երջանիկ չենք: Իսկ այստեղ կա հառաչանք. շուտով ամանների կույտ կհավաքվի, կլսվի մայրիկի հառաչանքը, որ հավաքում է, մաքրում տունը, հոգնածությունից ուժասպառ լինում... Ուրախությունն ու տխրությունն անբաժան են այս կյանքում:

Իմացի՛ր նաեւ, որ դու, որ այսօր մենակ ես, կարող ես ուրիշների համար օրինակ



ծառայել քո համբերությամբ, սովորեցնել նրանց լինել խոնարհ, ուժեղ, երախտագետ՝ նույնիսկ ոչինչ չունենալու դեպքում: Ոմանք գիտեն, որ մենակ ես: Կարծում ես՝ չե՞ն մտածում այդ մասին: Հիմա իրենց մեջ ասում են. «Հապա նայի՛ր, այս մարդն ինչպե՞ս է դիմանում: Ինչպե՞ս է տանում այդ տխրությունը, վիշտը, ցավը, հաշմանդամությունը, հիվանդությունը»: Եվ դու ուսուցանում ես նրանց քո օրինակով, դառնում քարոզիչ: Երբ չես բողոքում, չես դժգոհում քո վիճակից, ուսուցանում ես:

Ինչ էլ որ լինի, ինչ իրավիճակում էլ որ լինես, խոնարհեցրո՛ւ անձդ: Սրբերն ասում են, որ ամեն տեսակի տխրության լուծումը խոնարհության մեջ է: Այսինքն՝ պետք է անձդ անարժան համարես ամեն տեսակի բարիքի համար եւ ասես. «Տե՛ր, ես աննշան եմ, փոքր: Իրավունք չունեմ երջանկություն եւ ուրախություն պահանջելու, արժանի չեմ դրան»: Ոչ ոք չի կարող ասել. «Պահանջում եմ, որ լինեմ երջանիկ, պահանջում եմ, որ ինձ զանգահարեն, բոլորդ վատն եք, անպիտան, ինձ ոչ ոք չի սիրում»: Չես կարող պահանջել, բայց կարող ես խնդրել եւ ասել. «Տե՛ր, լավ ես անում, որ ինձ մենակ ես թողնում, դրան եմ արժանի, բայց եթե ուզես, կարող ես ինձ երջանկություն տալ: Չեմ կարող պահանջել, երբ որ ուզես, այն ժամանակ էլ կտաս: Գիտակցում եմ, որ դա ոչ թե իմ իրավունքն է, այլ քո նվերը: Ես միայն կարող եմ խնդրել ու թախանձել՝ ասելով. «Օրհնյալ ես Դու, Տե՛ր, սովորեցրու ինձ Քո արդարությունը»: Եթե երախտագիտությամբ ու խոնարհությամբ ընդունես քո վիճակը, գիտե՞ս՝ ինչքան կշահես. կսրբանաս այսօր, լուսապսակ կհայտնվի գլխիդ, կփայլես:

Շարունակելի

Թարգմանությունը հունարենից՝
Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ.

բանաստեղծական արվեստի նորարարը

Սկիզբը՝ էջ 4

Բացառիկ կատարելության հասցնելով հայկական վանկային ոտանավորի տեսակները՝ Տերյանն ազգային տաղաչափության մեջ սկիզբ դրեց վանկաշեշտային համակարգի զարգացմանը՝ իր կյանքի վերջին շրջանի գործերում դիմելով նաեւ համաշեշտ (տոնիկական) ոտանավորի ձեւերին: Բանաստեղծն իր ստեղծագործություններում կիրառեց մեր լեզվի համար խիստ դժվար մի չափ՝ յամբական բանաստեղծությունը, վարպետորեն գործածեց անապեստյան չափը, որը, հետագայում կապվելով բանաստեղծի անվան հետ, կոչվեց «տերյանական չափ»: Տերյանն անգնահատելի դեր կատարեց նաեւ չափածո խոսքի ռիթմի հարստացման բնագավառում: Բանաստեղծը «փնտրեց հայ բանաստեղծության մեջ նոր ռիթմեր, բացառիկ խստորեն մոտեցավ հանգին» *(Վ. Բրյուսով, Հայաստանի եւ հայ մշակույթի մասին, Ե., 1967, էջ 835)*:

Տերյանն անպատկերացնելի գեղարվեստական բարձունքի հասցրեց սիմվոլիստական քնարերգությունը: Տերյանի խորհրդապաշտությունը, սակայն, 19-րդ դարի կեսերից եվրոպական գրականության մեջ արմատավորված այդ ուղղության պարզ կրկնությունը չէր: Բանաստեղծի ստեղծագործություններն ի հայտ բերեցին խորհրդապաշտության լեզուն ու պատկերները, նոր շունչ հաղորդեցին ժամանակի հայ պոեզիային եւ նպաստեցին գեղարվեստական խոսքը նոր կերպարանքով հանդես բերելուն: Պատմական յուրաքանչյուր դարաշրջան թելադրում է կյանքն արտացոլելու իր սկզբունքներն ու չափանիշները, գեղարվեստական մտածողության ուրույն բնույթը, ուստի Տերյանը, անշուշտ, հաղորդակցվելով աշխարհի բարձր մշակույթների հետ, պետք է նոր որակ հաղորդեր ազգային արվեստին՝ փաստելով, որ հայ գրականությունն անջրպետված չէ համաշխարհային գրականությունից: Տերյանի վճռորոշ քայլն ազգային արժեքների վերագնահատումն էր՝ համամարդկային արժեքների ճանաչմամբ:

1908 թվականին լույս տեսավ Վ. Տերյանի բանաստեղծությունների անդրանիկ գրքույկը՝ «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն: Հայ բազմադարյան գրականության անցած ուղում չի եղել գրական մի ուրիշ երախայրիք, որն այնքան խոր տպավորություն թողած լինի, ինչպես այդ ժողովածուն: Տերյանագետ Սաքո Սուքիասյանը, «Վահան Տերյանը հայրենի Ջավախքում» հուշապատումում անդրադառնալով «Մթնշաղի անուրջներին», գրում է. «Այն դարձավ «կախարդական մի գավազան» եւ աննախընթաց քնքշությամբ շարժման մեջ դրեց ջահել մարդկանց ներքնաշխարհը» *(Տերյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1964, էջ 404-405)*: Մթնոլորտը գրված տերյանականությունն ընդգրկում էր եւ «Մթնշաղի անուրջների» տրամադրությունները, եւ դրանք արտահայտող լեզվաարտահայտչական միջոցները:

Ըստ Ա. Իսահակյանի՝ «Նա (Տերյանը – *Մ. Հ.)* թարմացրեց հայ պոեզիայի եւ նյութը, եւ լեզուն: Հայ բառերն ու ձեւերը կենդանացրեց, արդիացրեց» *(Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1977, էջ 278-279)*: Դրա համար էլ «տերյանական փուլը» չունեցավ միայն իրեն պատկանող ժամանակաշրջանը: «Թումանյանից ու Իսահակյանից հետո,– գրում է Է. Թոփչյանը,– Տերյանի գործունեությունը նոր, ավելի բարձր աստիճան էր հայ ժողովրդի բանաստեղծական կուլտուրայի զարգացման մեջ ոչ միայն իր բովանդակությամբ, այլեւ հայ ժողովրդի կեցության եւ պատմության զարգացման հեռանկարի նոր ըմբռնումով» *(Է. Թոփչյան, Վահան Տերյան, Ե., 1945, էջ 20)*:

Տերյանն ուղենշեց գրական լեզվի զարգացման ընթացքը: Նրա լեզուն համարվեց «կենտրոնաձիգ լեզու», որը պայմանավորեց հետագա շրջանի գեղարվեստական լեզվի զարգացումը: Տերյանական արվեստը միանգամայն նոր երեւույթ էր դարասկզբի հայ գրականության մեջ, իսկ բանաստեղծը՝ հայ գեղարվեստական մտքի պատմության մեջ այն եզակին, որ ստեղծեց գրական դպրոց եւ դարձավ այդ դպրոցի պարագլուխն ու ամենավառ դեմքը: Մեծ բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, արժեւորելով տերյանական պոեզիայի դերը հայ գրականության մեջ, մի առիթով գրել է. «Ամեն մի ժողովրդի գրականությունը հոգեւոր մի կառույց է, որն ունի իր հիմնախարիսխն ու սյուները: Թումանյանը, օրինակ, հիմք է, խարիսխ, միջնասյուն: Սակայն կառույցն ունենում է նաեւ դռներ, լուսամուտներ, որտեղից լույս է թափանցում, արեւի շող... Տերյանն այդ լուսամուտն է: Նրա բանաստեղծությունը լույս է, երդիկից ներս թափանցող թրթռուն ճառագայթ, որը փռվում է հոգու վրա փափուկ մի քնքշությամբ...»: Իսկապես, Տերյանը ճառագեց հայ գրականության երկնակամարում եւ իր լուսաշող արվեստի կենսատու ճառագայթներով բացառիկ ուժ ու հմայք հաղորդեց մեր լեզվին, ձեւավորեց ժամանակի մտածողությունը, ոճավորեց իր ժամանակը՝ դառնալով դարի սիմվոլը, հայ բանաստեղծական արվեստի մեծագույն նորարարը:

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

Ռաֆայել Իսրայելյան –110



Սկիզբը՝ էջ 5

Բնականաբար, ճարտարապետականից զատ, Իսրայելյանի ստեղծագործություններն ունեն նաեւ ազգային արժեք: Վարպետի ճարտարապետական կառույցներից մի քանիսը վերածվել են ազգային խորհրդանիշերի եւ ուխտատեղիների:

Նրա՝ չափ ու սահման չճանաչող հայրենասիրությունը, սակայն, միայն ստեղծագործություններում ու արվեստում չէր դրսեւորվում, նա անսահման հայրենասեր էր նաեւ կյանքում. Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում ուսանելու տարիներին Իսրայելյանն իր շուրջն էր հավաքում հայրենակից ուսանողներին, նրանց հետ անվերջ խոսում Հայաստանի մասին: Պատմում էր Հայաստանի տարբեր բնակավայրերի, հայկական պատմաճարտարապետական հուշարձանների՝ իր կատարած ուսումասիրությունների ու չափագրումների մասին, արտասանում էր Չարենց, պատմում էր Ռաֆֆու վեպերից հատվածներ, երգում էր հայկական ժողովրդական երգեր: Այս ամենով՝ Իսրայելյանը հայրենակիցների մեջ բաղձալի երազանքի էր վերածել հայրենիք վերադառնալը եւ հայրենիքում ու հայրենիքի համար ստեղծագործելը:

Իսրայելյանի հետ Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում ուսանած ճարտարապետ Օլգա Իվանովան հիշում է. «Բարդ ժամանակներ էին: *Ճարտարապետության մեջ նոր միայն սկսել էին հրաժարվել կոնստրուկտիվիզմից (որի սկզբունքներով դաստիարակվել էինք մենք), նոր-նոր միայն երեւան էին գալիս դետալները (քիվեր, խոյակներ, օրդերներ եւ այլն), եւ մենք, ճիշտն ասած, մի քիչ գլուխներս կորցրել էինք: Ու թերեւս միայն Ռաֆոն էր անշեղ ու հաստատուն քայլում իր ընտրած ճարտարապետական ուղիով: Նա գիտեր ու խորապես զգում էր հարազատ ժողովրդի բազմադարյան պատմությունը, որդու պես ջերմորեն սիրում էր իր երկիրը: Ես կաշխատեմ Հայաստանում եւ միայն Հայաստանի համար»,- ասում էր նա: Եվ կանոնավոր ուսումնասիրում էր հայրենի հնագույն ճարտարապետությունը: Ավելին, արվեստի եւ ճարտարապետության համընդհանուր պատմությունն ուսումնասիրելիս նա կարողանում էր «մաղել» ձեռք բերած գիտելիքները՝ թողնելով սոսկ այն, ինչ իրեն օգտակար էր թվում հայ ազգային արվեստի զարգացման համար:*

Երբ մենք ձեռնամուխ եղանք դիպլոմային նախագծին՝ «Նիժնի Նովգորոդի նավակայանը» թեմայով, Ռաֆոն կարճ ու կտրուկ ասաց. «Ես դիպլոմային նախագիծը կանեմ միայն ու միայն հայ ճարտարապետության ոգով: Թող էլի նավակայան լինի, բայց ոչ անպայման Վոլգայի, այլ պայմանական մի գետի ափին»: Ամբիոնը տեղի տվեց նրա համառ ու անդրդվելի ցանկության առաջ: Ռաֆոյի դիպլոմային նախագիծը վառ էր, արտահայտիչ ու անմիջական, ասես մի շնչով արված»:

Իսրայելյանի անսահման հայրենասիրությունը ցույց տվող եւս մի փաստ Վարազդատ Հարությունյանի հուշերից. 1971 թ. օգոստոսի 5-ին Մոսկվայի հիվանդանոցներից մեկում հայտնի վիրաբույժ Էդվարդ Վանցյանը վիրահատում է Իսրայելյանին, վիրահատությունն անցնում է հաջող: Հիվանդանոցից դուրս գրվելուն պես, փոխանակ Հարությունյանի խորհրդով Սուխանովո՝ ճարտարապետների հանգստյան տուն մեկնելու (որի մասին բոլոր կարգադրություններն արված էին), Իսրայելյանն անմիջապես վերադառնում է Երեւան. *«Առանց Երեւանի չեմ կարող ապրել. սա ինձ համար եւ դեղ է, եւ առողջարան»*,- ասում է նա:

Մեջբերենք նաեւ Վազգեն Վեհափառի հիշողություններից մի հատված. *«Երբ 1965 թ. հայ ժողովուրդը ոգեկոչեց նվիրական հիշատակը Մեծ Եղեռնի զոհերի, ինչպես գիտեք՝ օպերայի շենքում, Երեւանում, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որտեղ նշանակալից ճառերով հանդես եկան մեր հանրապետության նախագահը եւ ակադեմիային պրեզիդենտը: Եվ ինչպիսի՜ մասնակցություն բերեց մեր ժողովուրդը այդ հիշատակին: Գուցե հայ ժողովուրդը երբեք այդպես միակամ ու միասնական չէր եղել: Հարյուր հազարավոր հայեր հավաքվել էին հրապարակում: Այս բոլորը ծանոթ են ձեզ:*

Հաջորդ օրը մենք ունեցանք հանդիպում Մայր Աթոռում, եւ առաջին պահին, երբ Իսրայելյանին ձեռք տվեցի, տեսա նրան հոգեկան անսովոր վիճակի մեջ: Թեեւ նա միշտ լի էր եռանդով ու վառվռուն, աչքերը լույսով լեցուն, բայց այդ օրը նրա աչքերը առավել էին փայլում: Հարցրեցի՝ ինչպե՞ս եք, վարպե՛տ, երեկ որտե՞ղ էիք: Ասաց. «Բա որտե՞ղ լինեի, եթե ոչ հրապարակում, իմ ժողովրդի մեջ. ես էլ հայ մարդ եմ»: Ապա ավելացրեց. «Երեկ իմ կյանքում ավելի քան երբեք զգացի, թե մենք ժողովուրդ ենք, թե ազատ կամք ունենք եւ ապագա ունենք»: Եվ այս ասելիս լայն շունչ քաշեց, բարձրացրեց կուրծքը, աչքերը կայծկլտում էին, հայացքը դեպի ապագան, դեպի հայոց ապագան...»:

Շարունակելի

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.01.2019 թ.
Տպաքանակը՝ 1175